ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ
Հեռ.՝ +37410 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք Երևան
Վ. Սարգսյան 10,
Տարածք 114

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ տնօրենների խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, և այնպիսի ներքին վերահսկողության համար, ինչպիսին որ ղեկավարությունը անհրաժեշտ է համարում ունենալ՝ խարդախության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելը: Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկերի գնահատումը: Նշված ռիսկերը գնահատելիս, աուդիտորը դիտարկում է կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողությունը՝ նպատակ ունենալով նախագծել տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև՝ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների

ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական ԲԻ-ԴԻ-Օ Ինթերնեշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և ԲԻ-ԴԻ-Օ անվան ընկերությունների միջազգային ցանցի անդամ:

խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ ու համապատասխան են՝ մեր կարծիքի հիմքը հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2011թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա նրա գործունեության ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Գործադիր Տնօրեն Ա. Անդրեասյան

Աուդիտոր Հ. Հովհաննիսյան

Երևան,
28 հունիսի, 2012թ.

Որակավորված Աուդիտոր, գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 082 լիցենզիա,
տրված ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
31 դեկտեմբերի դրությամբ
(հազար դրամ)

ԱԿՏԻՎՆԵՐ	Ծանոթագրություն	2011թ.	2010թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	3	77,867,152	85,107,529
Ոչ նյութական ակտիվներ	4	6,528,835	6,145,883
Ներդրումներ	5	7,660,300	15,573,448
Վարձակալված գույքի վրա կատարված հետաձգված ծախսեր	6	2,572,002	2,880,309
Հետաձգված հարկային ակտիվներ	28	524,536	129,819
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման համար		74,412	416,200
Հետաձգված ծախսեր իրացման պլանների գծով		-	158,286
		95,227,237	110,411,474
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	2,543,732	7,001,724
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	8	10,377,468	8,217,157
Կարճաժամկետ փոխառություններ	5	4,454,815	-
Ընթացիկ հարկերի և վճարների գծով ակտիվներ	9	1,122,815	3,565,380
Այլ դեբիտորական պարտքեր	10	172,180	151,420
Հետաձգված ծախսերի ընթացիկ մաս	11	725,940	782,785
Ժամկետային ավանդներ և մուրհակներ		-	52,037
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	2,125,661	2,041,881
		21,522,611	21,812,384
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	13	191,394	-
		21,714,005	21,812,384
Ընդամենը ակտիվներ		116,941,242	132,223,858

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Ծանոթագրություն	2011թ.	2010թ.
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		18,837,709	18,837,709
Կուտակված շահույթ		87,236,356	93,095,714
Պահուստային կապիտալ	14	2,825,656	2,825,656
		108,899,721	114,759,079
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		-	830,812
Ոչ ընթացիկ պահուստներ	15	445,117	401,578
Հետաձգված եկամուտներ	16	683,889	751,762
		1,129,006	1,984,152
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մաս		2,366	1,417,150
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	17	3,819,059	10,931,532
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով		205,412	252,598
Ստացված ընթացիկ կանխավճարներ	18	1,470,638	904,350
Ընթացիկ հարկային և այլ պարտավորություններ	19	460,906	629,408
Ընթացիկ պահուստներ	20	687,824	900,701
Հետաձգված եկամուտների ընթացիկ մաս	16	266,310	444,888
		6,912,515	15,480,627
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		116,941,242	132,223,858

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ տնօրենների խորհրդի կողմից 2012թ. մայիսի 22-ին և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Իգոր Կլիմկո, Գլխավոր տնօրեն _____

Ժիրայր Պապոյան, Գլխավոր հաշվապետ _____

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ
31 դեկտեմբերին ավարտված տարվա համար
(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2011թ.	2010թ.
Հասույթ	21	70,310,510	67,844,666
Վաճառքի ինքնարժեք	22	(49,321,773)	(45,208,249)
Համախառն շահույթ		20,988,737	22,636,417
Իրացման ծախսեր	23	(4,867,171)	(4,764,642)
Վարչական ծախսեր	24	(5,619,671)	(5,959,247)
Այլ եկամուտներ և ծախսեր	25	(3,307,130)	(5,357,398)
Գործառնական շահույթ		7,194,765	6,555,130
Ֆինանսական եկամուտ	26	993,152	2,177,017
Ֆինանսական ծախսեր	27	(69,124)	(110,270)
Շահույթ մինչև հարկումը		8,118,793	8,621,877
Շահութահարկի գծով ծախս	28	(2,378,151)	(3,225,483)
Ընդամենը համապարփակ եկամուտ		5,740,642	5,396,394

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ տնօրենների խորհրդի կողմից 2012թ. մայիսի 22-ին և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Իգոր Կլիմկո, Գլխավոր տնօրեն

Ժիրայր Պապոյան, Գլխավոր հաշվապահ